

Հաստատված է՝

«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան

պետական մանկավարժական ինստիտուտ»

ՊՈԱԿ-ի գիտական խորհրդի

« 26 » մայիսի 2012 թ. նիստում

Խորհրդի նախագահ՝ \_\_\_\_\_ Վ. Գրիգորյան

## **ԸՆԹԱՑԱԿԱՐԳ**

# **«ԳՅՈՒՄՐՈՒ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆՆԵՐԻ ՎԱՐԻՉՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

### **1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

- 1.1. Սույն ընթացակարգով սահմանվում է ԳՊՄԻ-ի ամբիոնի վարիչի ընտրության, աշխատանքային պայմանագրի կնքման և պաշտոնում հրամանագրման կարգը:
- 1.2. Ամբիոնը ֆակուլտետի կառուցվածքային հիմնական ուսումնագիտական ստորաբաժանում է, որը միավորում է մասնագիտական ընդհանրություն ունեցող գիտամանկավարժական կազմ, կազմակերպում և իրականացնում է ուսումնական գործընթացը, ուսումնամեթոդական, գիտահետազոտական և կազմակերպչական աշխատանքները, բարձրորակ մասնագետների և գիտամանկավարժական կադրերի պատրաստումը, նրանց որակավորման բարձրացման և վերաորակավորման գործընթացները:
- 1.3. Ըստ կառուցվածքային ենթակայության՝ ԳՊՄԻ-ի ամբիոնները լինում են՝
  - 1.3.1. համաինստիտուտային (գործունեությունը համակարգվում է ռեկտորի, պրոռեկտորների կողմից),
  - 1.3.2. ֆակուլտետային (գործունեությունը վերահսկվում է ֆակուլտետի դեկանի կողմից):
- 1.4. Ամբիոնի գործունեությունն իր իրավասության սահմաններում կազմակերպում և ղեկավարում է ամբիոնի վարիչը, որն ընտրվում է սույն ընթացակարգի համաձայն, 5 տարի ժամկետով և պաշտոնում հրամանագրվում է ԳՊՄԻ-ի ռեկտորի կողմից:
- 1.5. Համաինստիտուտային և ֆակուլտետային ամբիոնների վարիչներն ընտրվում են ԳՊՄԻ գիտխորհրդի նիստում:
- 1.6. Ամբիոնի վարիչը՝
  - 1.6.1. հաշվետու է ամբիոնին, ֆակուլտետի դեկանին, ԳՊՄԻ-ի պրոռեկտորներին և ռեկտորին,

- 1.6.2. ներկայացնում է ամբիոնը ֆակուլտետում և ֆակուլտետից դուրս, մասնակցում է ԳՊՄԻ-ի ամբիոնի գործունեությանն առնչվող հարցերի քննարկմանը,
- 1.6.3. ի պաշտոնե ֆակուլտետի ղեկանատի անդամ է,
- 1.6.4. նախագահում է ամբիոնի նիստերը,
- 1.6.5. իրականացնում է ամբիոնի տարեկան ուսումնական ծանրաբեռնվածության և ամբիոնի աշխատողների պարտականությունների բաշխումը, վերահսկում դրանց կատարման ժամկետներն ու որակը,
- 1.6.6. պլանավորում և ղեկավարում է ամբիոնի ուսումնամեթոդական աշխատանքները և առարկայական ծրագրերի կազմումը, մասնակցում է մասնագիտությունների (մասնագիտացումների) ուսումնական պլանների կազմմանը,
- 1.6.7. կատարում է ամբիոնի դասախոսների դասալսումներ և կազմակերպում դրանց քննարկում,
- 1.6.8. ներկայացնում է ամբիոնի նիստին առաջարկություններ ամբիոնի պրոֆեսորադասախոսական թափուր պաշտոնատեղերի տեղակալման, պաշտոններում առաջադրման, հատուկ տարակարգեր զբաղեցնելու և վերապայմանագրավորման վերաբերյալ,
- 1.6.9. ներկայացնում է առաջարկություններ ԳՊՄԻ-ի ռեկտորին ամբիոնի նոր պրոֆեսորադասախոսական պաշտոնատեղերի ստեղծման, պրոֆեսորադասախոսական կազմի պայմանագրերի նախագծերի վերաբերյալ:
- 1.6.10. ԳՊՄԻ-ի պրոռեկտորներին, ֆակուլտետի ղեկանին հաստատման է ներկայացնում ամբիոնի ուսումնամեթոդական, գիտահետազոտական և կազմակերպչական աշխատանքների տարեկան պլանը և դրա վերաբերյալ ներկայացնում տարեկան հաշվետվություն,
- 1.6.11. կազմակերպում է գիտամանկավարժական կադրերի պատրաստման, ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման և վերաորակավորման գործընթացները,
- 1.6.12. իրականացնում է վերահսկողություն և կրում պատասխանատվություն ամբիոնում ուսումնական, մեթոդական և գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման համար,
- 1.6.13. իրավասու է նախաձեռնել ամբիոնի աշխատակիցների պարգևատրման և խրախուսման գործընթաց, ամբիոնի աշխատակիցներին կարգապահական տույժերի ենթարկելու համար միջնորդում է վերադաս մարմիններին:

## **2. ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄԸ**

- 2.1. ԳՊՄԻ-ում սահմանվում է ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման մրցույթային եղանակ:
- 2.2. Ամբիոնի վարիչի թափուր պաշտոնատեղի մրցույթի վերաբերյալ հայտարարությունը տրվում է տեղական մամուլում, ԳՊՄԻ-ի պաշտոնական

կայքում, հայտարարությունը փակցվում է ԳՊՄԻ-ի վարչական մասի, ֆակուլտետի և համապատասխան ամբիոնի հայտարարությունների տախտակներին: Հայտարարության մեջ նշվում են մրցույթի պայմանները, պաշտոնատեղի հավակնորդին ներկայացվող պահանջները և դիմումի ներկայացման ժամկետը՝ հայտարարության հրապարակումից հետո 30 օրվա ընթացքում:

2.3. Ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման մրցույթին մասնակցում են պրոֆեսոր (գիտությունների դոկտոր) կամ գիտությունների թեկնածուի, դոցենտի գիտական աստիճան, կոչում ունեցող անձինք: Ամբիոնի վարիչի մրցույթին կարող են մասնակցել գիտությունների դոկտոր և պրոֆեսոր՝ մինչև 70 տարեկան, ՀՀ ԳԱԱ թղթակից և իսկական անդամները՝ մինչև 75 տարեկան: Թեկնածուների բացակայության կամ առաջին մրցույթից հետո, ամբիոնի վարիչի պաշտոնը թափուր մնալու դեպքում, մեկ ամսվա ընթացքում հայտարարվում է կրկնակի մրցույթ, որին կարող են մասնակցել նաև գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող անձինք: Պաշտոնատեղի հավակնորդները պետք է ունենան առնվազն 5 տարվա գիտամանկավարժական աշխատանքային փորձ: Նույն անձը, անկախ ամբիոնի վերամիավորումից, վերանվանումից կարող է ամբիոնի վարիչի պաշտոնը զբաղեցնել ոչ ավելի, քան երկու հնգամյա ժամկետ անընդմեջ: Նույն անձը կարող է առաջադրվել երկրորդ կամ ավելի անգամ, եթե ունի գիտությունների դոկտորի գիտական աստիճան կամ պրոֆեսորի կոչում (**լրամշակված՝ 06.06.2015թ.**):

2.4. Արվեստի, մշակույթի, ֆիզիկական կուլտուրայի ամբիոնների վարիչների պաշտոնների հավակնորդների համար գիտական աստիճանի (կոչման) առկայությունը պարտադիր չէ:

2.5. Ամբիոնի վարիչի պաշտոնատեղի հավակնորդները հայտարարության մեջ նշված ժամկետում ԳՊՄԻ-ի ընդհանուր բաժին են ներկայացնում՝

- 2.5.1. դիմում՝ ռեկտորի անունով,
- 2.5.2. կադրերի հաշվառման անհատական թերթիկ,
- 2.5.3. քաղվածք աշխատանքային գրքույկից,
- 2.5.4. համառոտ ինքնակենսագրություն,
- 2.5.5. գիտական (որակավորման) աստիճանը և գիտական կոչումը հաստատող փաստաթղթերի պատճենները,
- 2.5.6. տպագրված գիտական և մեթոդական աշխատանքների ցուցակ,
- 2.5.7. տվյալներ պարզևատրումների, մրցանակների և պատվավոր կոչումների վերաբերյալ:

ԳՊՄԻ-ում 5 և ավելի տարիներ աշխատած հավակնորդը պաշտոնատեղի համար ներկայացնում է նաև ուսանողների կողմից նրա մանկավարժական գործունեության գնահատման սոցիոլոգիական հարցման արդյունքները, որոնք ստացվում են սահմանված կարգով:

2.6. Ամբիոնի վարիչի պաշտոնատեղի հավակնորդի գործը չի ընդունվում, եթե պահանջվող փաստաթղթերը լրիվ չեն կամ պահպանված չէ ներկայացման ժամկետը: Ամբիոնի վարիչի պաշտոնատեղի հավակնորդի դիմումը մերժվում է

ռեկտորի կողմից, եթե ներկայացված փաստաթղթերը չեն բավարարում մրցույթի պայմանները:

- 2.7. Ռեկտորի կողմից մրցույթին մասնակցելու թույլտվություն ստացած հավակնորդների գործերը տրվում են մրցույթային հանձնաժողովին:
- 2.8. Ֆակուլտետի ղեկանը (համաինստիտուտային ամբիոնների ղեկավար՝ համապատասխան պրոռեկտորը) 1 շաբաթվա ընթացքում հրավիրում է ամբիոնի նիստ և կազմակերպում ռեկտորի կողմից մրցույթին մասնակցելու թույլտվություն ստացած հավակնորդների գործերի քննարկում և ԳՊՄԻ-ի մրցույթային հանձնաժողով է ներկայացնում համապատասխան ամբիոնի կարծիքը՝ մասնագիտական բնութագրերի ու մանկավարժական գործունեության վերաբերյալ, ամբիոնի նիստի քվեարկության արդյունքները (փակ կամ բաց՝ ըստ ամբիոնի նիստի որոշման): Ամբիոնի վարիչի պաշտոնատեղի համար մեկից ավելի դիմումների առկայության դեպքում ամբիոնի նիստում գործերի քննարկման արդյունքում ամբիոնը կարող է հիմնավորված առաջնություն տալ հավակնորդներից մեկին, որից հետո բոլոր գործերը ներկայացվում են ԳՊՄԻ-ի մրցույթային հանձնաժողովին:
- 2.9. Ամբիոնի կառուցվածքի և (կամ) անվանման փոփոխման դեպքում ամբիոնի վարիչը շարունակում է պաշտոնավարել, եթե նա հանդիսանում է փոփոխված կառուցվածքով և(կամ) անվանափոխված ամբիոնի ուղղությամբ մասնագետ, հակառակ դեպքում ինստիտուտի ռեկտորը նշանակում է նոր ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ մինչև մրցույթային կարգով ամբիոնի վարիչի ընտրության գործընթացի ավարտը:
- 2.10. Ամբիոնի՝ երկու կամ ավելի ամբիոնների բաժանման դեպքում, նախկին ամբիոնի վարիչը շարունակում է իր պաշտոնավարումը ամբիոններից մեկի վարիչի պաշտոնում, որը համապատասխանում է իր մասնագիտությանը , մինչև պայմանագրով նախատեսված ժամկետի ավարտը, իսկ մյուս ամբիոնի(ների) համար իստիտուտի ռեկտորը նշանակում է ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ մինչև մրցույթային կարգով ամբիոնի վարիչի ընտրության գործընթացի ավարտը:
- 2.11. Ամբիոնների միավորման և անվանափոխման դեպքում.
  - ա) եթե միավորումը տեղի է ունեցել ամբիոններից մեկի աշխատանքային պայմանների փոփոխման պատճառով, ապա մյուս ամբիոնի վարիչը պահպանում է իր ամբիոնի վարիչի կարգավիճակը մինչև պայմանագրով սահմանված ժամկետի ավարտը
  - բ) եթե միավորումը տեղի է ունեցել հավասար պայմաններում, ինստիտուտի ռեկտորը նշանակում է նոր կազմավորված ամբիոնի պաշտոնակատար՝ մինչև մրցույթային կարգով ամբիոնի վարիչի ընտրության գործընթացի ավարտը:
- 2.12. Առանձնահատուկ դեպքերում (նոր ստեղծվող ֆակուլտետ կամ համաինստիտուտային ամբիոն, ամբիոնի վարիչի պաշտոնի թեկնածության բացակայություն, կրկնակի մրցույթի բացասական արդյունք և այլն) ռեկտորն իրավասու է մինչև 1 տարի ժամկետով ամբիոնի վարիչի պաշտոնում հրամանագրել սույն ընթացակարգի 2.3 և 2.4 կետերի պահանջները բավարարող ԳՊՄԻ-ի տվյալ կամ այլ մասնագետի և հրամանագրման ժամկետի ավարտին կազմակերպում է ամբիոնի վարիչի ընտրության նոր գործընթաց:

### **3. ԱՍԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ՊԱՇՏՈՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ**

- 3.1. Ֆակուլտետային ամբիոնի վարիչի պաշտոնի թեկնածուներին քննարկման ժամանակ ԳՊՄԻ-ի մրցութային հանձնաժողովը հավակնորդի թեկնածությունը ներկայացնում է ԳՊՄԻ-ի գիտխորհրդին, որն էլ անցկացնում է փակ (գաղտնի) քվեարկություն:
- 3.2. Փակ (գաղտնի) քվեարկությունը նախագահողը ներկայացնում է թեկնածուների ցուցակը՝ ըստ այբբենական կարգի:
- 3.3. Ըստ այբբենական կարգի՝ ԳՊՄԻ գիտխորհրդի նախագահը ներկայացնում է թեկնածուների տվյալները, ամբիոնի և մրցութային հանձնաժողովի կարծիքները:
- 3.4. ԳՊՄԻ-ի գիտխորհրդի նիստին ամբիոնի վարիչի թեկնածուն իր ցանկությամբ կարող է մասնակցել և ծրագրային ելույթ ունենալ:
- 3.5. Ծրագրային ելույթի համար նախագահողը ձայնը տալիս է ամբիոնի վարիչի պաշտոնի թեկնածուներին՝ ըստ ցուցակի: Ելույթի ժամանակը որոշում է ԳՊՄԻ-ի գիտխորհուրդը:
- 3.6. Նախագահողի առաջարկությամբ յուրաքանչյուր թեկնածուի ելույթից հետո ԳՊՄԻ-ի գիտխորհրդի անդամները և հրավիրված անձինք կարող են հարցեր տալ: Հարցերը սահմանափակվում են նախագահողի առաջարկով՝ ԳՊՄԻ-ի գիտխորհրդի որոշմամբ:
- 3.7. ԳՊՄԻ-ի մրցութային հանձնաժողովի բացասական եզրակացության կամ ԳՊՄԻ-ի գիտխորհրդի որոշման հետ, ռեկտորի համաձայնության դեպքում, եթե առկա են փաստաթղթերի ձևակերպման կամ ընթացակարգային բնույթի խախտումներ, հավակնորդի գործը վերադարձվում է ԳՊՄԻ-ի մրցութային հանձնաժողով՝ կրկնակի քննարկման:
- 3.8. Համախիստիտուտային ամբիոնի վարիչի պաշտոնի թեկնածուների քննարկման ընթացքը նույնն է, ինչ նախորդ դեպքում:

### **4. ԱՍԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ**

- 4.1. Քննարկումներից հետո ինքնաբացարկ չհայտարարած թեկնածուների ազգանունները ԳՊՄԻ-ի գիտխորհրդի որոշմամբ մտցվում են քվեաթերթիկի մեջ:
- 4.2. Նախագահողը ԳՊՄԻ-ի գիտխորհրդի անդամներին ներկայացնում է փակ (գաղտնի) քվեարկության կարգը:
- 4.3. Նախագահողի առաջարկով փակ (գաղտնի) քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու համար ԳՊՄԻ-ի գիտխորհրդի որոշմամբ գիտխորհրդի անդամներից ընտրվում է հաշվիչ հանձնաժողով՝ բաղկացած ոչ պակաս, քան 3 հոգուց (կենտ թվով): Թեկնածուները չեն կարող լինել հաշվիչ հանձնաժողովի անդամ: Հաշվիչ հանձնաժողովն իր կազմից ընտրում է հանձնաժողովի նախագահ: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

- 4.4. Մեկ թեկնածուի դեպքում քվեաթերթիկը պետք է ունենա հավելված 1-ում տրված տեսքը, մեկից ավելի թեկնածուների դեպքում՝ հավելված 2-ում տրված տեսքը:
- 4.5. ԳՊՄԻ-ի գիտխորհրդի յուրաքանչյուր անդամի տրվում է մեկ քվեաթերթիկ: Քվեաթերթիկ ստացողը ստորագրում է ԳՊՄԻ-ի գիտխորհրդի անդամացուցակում:
- 4.6. Քվեարկությունն ավարտվելուց հետո հաշվիչ հանձնաժողովն ամփոփում է քվեարկության արդյունքները և կազմում արձանագրություն (Հավելված 3): Մեկից ավելի թեկնածուների դեպքում արձանագրության մեջ թեկնածուների ցուցակը տրվում է ըստ հավաքած ձայների քանակի նվազման հաջորդականության:
- 4.7. Վավեր են համարվում այն քվեաթերթիկները, որոնցում
- 4.7.1. թողնված է «կողմ» կամ «դեմ» բառը (մեկ թեկնածուի դեպքում),
- 4.7.2. քվեարկված է միայն մեկ թեկնածուի օգտին կամ «բոլորին դեմ եմ» կետի օգտին (մեկից ավելի թեկնածուների դեպքում): Որևէ թեկնածուի օգտին կամ «բոլորին դեմ եմ» կետի օգտին քվեարկելու համար համապատասխան տողի վանդակում կատարվում է նշում:
- Մնացած դեպքերում, ինչպես նաև քվեաթերթիկում չնախատեսված նշումների, ընդգծումների և այլ նշանների առկայության դեպքում, քվեաթերթիկը համարվում է անվավեր: Քվեաթերթիկն անվավեր ճանաչելու որոշումը կայացնում է հաշվիչ հանձնաժողովը:
- 4.8. Ամբիոնի վարիչի թեկնածուն համարվում է ընտրված, եթե նրա օգտին քվեարկել է ԳՊՄԻ-ի գիտխորհրդի ներկա անդամների կեսից ավելին:
- 4.9. Մեկից ավելի թեկնածուների դեպքում որևէ թեկնածուի՝ ԳՊՄԻ-ի գիտխորհրդի ներկա անդամների ձայների կեսից ավելին չհավաքելու դեպքում, նույն նիստում կազմակերպվում է կրկնակի քվեարկություն, որին մասնակցում են՝
- 4.9.1. առավելագույն ձայներ հավաքած առաջին երկու թեկնածուները կամ
- 4.10. առավելագույն ձայներ ստացած առաջին թեկնածուն և նույնաքանակ ձայներ ստացած երկրորդ ու հաջորդ թեկնածուները:
- 4.11. Կրկնակի քվեարկությունը կազմակերպվում է սույն ընթացակարգին համապատասխան:
- 4.12. ԳՊՄԻ-ի գիտխորհուրդը հաշվիչ հանձնաժողովի արձանագրության տվյալների զեկուցման հիման վրա ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝
- 4.12.1. ամբիոնի վարիչ ընտրվելու մասին,
- 4.12.2. կրկնակի քվեարկություն անցկացնելու մասին,
- 4.12.3. ընտրությունները չկայացած ճանաչելու մասին,
- 4.12.4. ընտրություններն անվավեր ճանաչելու մասին:
- 4.13. Ամբիոնի վարիչի ընտրությունները համարվում են չկայացած, եթե
- 4.13.1. ամբիոնի վարիչի պաշտոնի միակ թեկնածուն չի ստացել ԳՊՄԻ-ի գիտխորհրդի ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությունը,
- 4.13.2. կրկնակի քվեարկության արդյունքով որևէ թեկնածու չի ստացել ԳՊՄԻ-ի գիտխորհրդի նիստին մասնակից անդամների ձայների կեսից ավելին:
- 4.14. Ամբիոնի վարիչի ընտրական գործընթացն արտացոլող բոլոր փաստաթղթերը նիստի արձանագրության հետ միասին ներկայացվում են ռեկտորին: Ամբիոնի վարիչի ընտրությունների գործընթացում ՀՀ օրենսդրության, ԳՊՄԻ-ի կանոնադրության և սույն ընթացակարգի խախտումներ ի հայտ գալու դեպքում ռեկտորը գրավոր

պատճառաբանված որոշմամբ ամբիոնի վարիչի ընտրությունները ճանաչում է անվավեր և նշանակում նոր ընտրություններ կամ 10-օրյա ժամկետում կրկնակի քննարկում և կազմակերպում է քվեարկություն:

**5. ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ՝ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄԸ**

- 5.1. Ամբիոնի վարիչի պաշտոնում մրցույթով անցած անձի հետ ԳՊՄԻ-ի ռեկտորը 5 տարի ժամկետով կնքում է աշխատանքային պայմանագիր և նրան հրամանագրում ամբիոնի վարիչի պաշտոնում: Ամբիոնի վարիչը միաժամանակ 2 պաշտոն չի կարող զբաղեցնել:
- 5.2. Պայմանագրով նախատեսված աշխատանքները որակով, նշված ծավալներով և ժամկետում կատարելու դեպքում ԳՊՄԻ-ի ռեկտորին իրավունք է վերապահվում ամբիոնի վարիչի հետ կնքել նոր պայմանագիր՝ օրենքով սահմանված կարգով և հիմք ընդունելով ԳՊՄԻ-ի գիտխորհրդի դրական կարծիքը:
- 5.3. Պայմանագրում նշված պաշտոնավարման ժամկետը լրանալու և նոր պայմանագիր չկնքելու, ինչպես նաև սույն ընթացակարգի 1.4 կետով հաստատագրված ամբիոնի վարիչի պաշտոնավարման առավելագույն ժամկետը լրանալու կապակցությամբ ԳՊՄԻ-ի ռեկտորը, օրենքով սահմանված կարգով, պայմանագրում նշված ժամկետի ավարտից 2 ամիս առաջ այդ մասին գրավոր ծանուցում է ամբիոնի վարիչին և նշանակում նոր ընտրություններ՝ սույն ընթացակարգի համաձայն:
- 5.4. Պայմանագիրը կարող է դադարեցվել կամ վաղաժամ լուծվել ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով, ինչպես նաև կողմերից մեկի նախաձեռնությամբ՝ պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ այլ պատճառներով: Պայմանագիրը դադարեցնելու կամ լուծելու որոշման մասին կողմերը միմյանց իրազեկ են պահում 2 ամիս առաջ՝ պարզաբանելով որոշումն ընդունելու պատճառները, որից հետո ԳՊՄԻ -ի ռեկտորը նշանակում է ամբիոնի վարիչի նոր ընտրություններ՝ սույն ընթացակարգի համաձայն:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Հաշվիչ հանձնաժողովն ընտրվել է ԳՊՄԻ գիտխորհրդի

տարեթիվ, ամսաթիվ

նիստում (արձանագրություն թիվ \_\_\_\_\_) հետևյալ կազմով՝

1. \_\_\_\_\_

ազգանուն, անուն

2. \_\_\_\_\_

ազգանուն, անուն

3. \_\_\_\_\_

ազգանուն, անուն

ԳՊՄԻ գիտխորհրդի \_\_\_\_\_ անդամներից ներկա էին \_\_\_\_\_-ը:

Քվեարկվել է (են) \_\_\_\_\_ ամբիոնի վարիչի պաշտոնի

ամբիոնի անվանումը

թեկնածությունը (ներքև):

Քվեարկությանը մասնակցել են ԳՊՄԻ-ի գիտխորհրդի թվով \_\_\_\_\_ անդամներ:

Բաժանվել է \_\_\_\_\_ քվեաթերթիկ:

Քվեատուփում առկա է \_\_\_\_\_ քվեաթերթիկ:

Քվեարկության արդյունքներն են՝

- միակ թեկնածուի դեպքում.

ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ, ԱՆՈՒՆԸ	ԿՈՂՄ	ԴԵՄ	ԱՆՎԱՎԵՐ

- մեկից ավելի թեկնածուների դեպքում.

ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ, ԱՆՈՒՆԸ	ԿՈՂՄ	ԴԵՄ	ԱՆՎԱՎԵՐ



Անվավեր քվեաթերթիկների քանակը \_\_\_\_\_:

Փակ (զաղտնի) քվեարկության արդյունքով

\_\_\_\_\_ ազգանուն, անուն  
ընտրված է (չի ընտրված) \_\_\_\_\_ ամբիոնի անվանումը ամբիոնի վարիչի պաշտոնում:

Կամ՝

Փակ (զաղտնի) քվեարկության արդյունքով \_\_\_\_\_ ամբիոնի անվանումը ամբիոնի

վարիչի պաշտոնի թեկնածուներից ոչ մեկը չի ընտրվում ամբիոնի վարիչի պաշտոնում, իսկ ներքոհիշյալ թեկնածուները մասնակցում են կրկնակի քվեարկությանը.

1. \_\_\_\_\_  
ազգանուն, անուն

2. \_\_\_\_\_  
ազգանուն, անուն

3. \_\_\_\_\_  
ազգանուն, անուն

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝ \_\_\_\_\_  
ստորագրություն

\_\_\_\_\_ ազգանուն, անուն

Հաշվիչ հանձնաժողովի անդամներ՝

1. \_\_\_\_\_  
ստորագրություն \_\_\_\_\_ ազգանուն, անուն

2. \_\_\_\_\_  
ստորագրություն \_\_\_\_\_ ազգանուն, անուն

3. \_\_\_\_\_  
ստորագրություն \_\_\_\_\_ ազգանուն, անուն

**ՔՎԵԱԹԵՐԹԻԿ**

**ԳՅՈՒՄՐՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ**

ԳՊՄԻ -ի գիտխորհրդի

\_\_\_\_\_ նիստում (արձանագրություն թիվ \_\_\_\_\_)

տարեթիվ, ամսաթիվ

\_\_\_\_\_ ամբիոնի վարիչի փակ (գաղտնի) քվեարկության

**Թեկնածուի ազգանուն, անուն**

**Կողմ**

**Դեմ**

Թեկնածությանը կողմ լինելու դեպքում թողնվում է «Կողմ» բառը, ջնջվում՝ «Դեմ» բառը, իսկ դեմ լինելու դեպքում թողնվում է «Դեմ» բառը, ջնջվում՝ «Կողմ» բառը:

**ՔՎԵԱԹԵՐԹԻԿ**

**ԳՅՈՒՄՐՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ**

ԳՊՄԻ գիտխորհրդի \_\_\_\_\_ նիստում (արձանագրություն թիվ \_\_\_\_\_)

տարեթիվ, ամսաթիվ

\_\_\_\_\_ ամբիոնի վարիչի փակ (գաղտնի) քվեարկության

ամբիոնի անվանումը

\*\*)

1.ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	
2. ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	
3. ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	
4. ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	
5. ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	
6. ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	
7.ԲՈՒՆՈՒՄ ԴԵՄ ԵՄ	

Որևէ թեկնածուին կողմ լինելու կամ բոլորին դեմ լինելու դեպքում քվեաթերթիկում համապատասխան տողի վանդակում կատարվում է նշում: